# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐՈՒՊՊ ՍՊԸ-ն ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/28 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 4 | Գոֆորմ Վանլի | ԱՄԱՌԱՅԻՆ ՕԴԱՃՆՇԱԿԱՆ ԱՆՎԱԴՈՂԵՐ** Ամառային օդաճնշական անվադողերը նախատեսված են ավտոմեքենաների անվտանգ և արդյունավետ շահագործման համար ամառային եղանակային պայմաններում (բարձր և միջին ջերմաստիճան, չոր և թաց ճանապարհածածկ)։ Անվադողը պետք է ունենա վավեր համապատասխանության սերտիֆիկատ, որը հաստատում է դրա համապատասխանությունը գործող նորմատիվ պահանջներին։ Անվադողը պետք է լիովին համապատասխանի ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1558 որոշմամբ հաստատված «Օդաճնշական անվադողերի տեխնիկական կանոնակարգի» պահանջներին։ Արտադրության տարեթիվը- 2025-2026 թ. ։ Չօգտագործված ։ Անվադողը պետք է լինի նոր, չօգտագործված, առանց որևէ վերանորոգման, վերամշակման կամ մեխանիկական վնասվածքների հետքերի։ Ամառային անվադողը պետք է ունենա ամառային շահագործման համար նախատեսված հատուկ ռելիեֆային նախշ (պրոտեկտոր), որը ապահովում է բարձր կպչողականություն և կայունություն ինչպես չոր, այնպես էլ թաց ճանապարհածածկի վրա, ինչպես նաև արդյունավետ ջրահեռացում թաց երթևեկության պայմաններում։ Ռետինային խառնուրդը պետք է ապահովի բարձր դիմադրություն բարձր ջերմաստիճանների նկատմամբ, պահպանելով անվադողի ձևը, կպչողականությունն ու շահագործման արդյունավետությունը |

| | | |
|---|---|---|
| | | երկարատև օգտագործման ընթացքում: Անվադողի շերտային կառուցվածքը պետք է ապահովի բարձր դիմացկունություն, մաշակայունություն և ծանրաբեռնվածության նկատմամբ կայունություն, ինչպես նաև անվտանգ երթևեկություն: Անվադողը պետք է ապահովի կայունություն, լավ կառավարելիություն և կարճ արգելակման ճանապարհ ինչպես չոր, այնպես էլ թաց ճանապարհային պայմաններում: Շահագործման ընթացքում՝ գործարանային թերություն ի հայտ գալու դեպքում, անվադողը ենթակա է փոխարինման նորով՝ մատակարարի հետ համապատասխան զննությունից հետո: Բեռանաթափում և տեղափոխում պահեստ Մատակարարը պարտավորվում է ապրանքի մատակարարումն իրականացնել Պատվիրատուի կողմից նշված հասցեով և սեփական ուժերով ու միջոցներով ապահովել ապրանքի բեռանաթափումը, տեղափոխումը և տեղաբաշխումը (դասավորումը) Պատվիրատուի կողմից սահմանված համապատասխան պահեստում/պահեստային տարածքում: Ապրանքի հանձնումը չի համարվում կատարված միայն մուտքի մոտ կամ բակի տարածքում բեռնաթափելու դեպքում. ապրանքը պետք է հանձնվի պահեստում՝ ամբողջ ծավալով, առանց լրացուցիչ ծախսերի Պատվիրատուի համար: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО *ДАНИЕЛЯН ГРУПП* в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/28 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 4 | | |